Միքայել Նալբանդյան

Սուրբ Մեսրովբի տոնին

Մովսես թեև օրենք տվեց,
Բայց գիրը կար շատ առաջ,
Մեսրովբ ազգերին գիր տվեց,
Չարժե՞ սա մի խաշնարած:

Այո՛, և սա արածում է,
Բայց հայ ազգի գառները,
Սորա հոտը լուսակիզն է .
Ի՞նչ էր քուրմ Հոթորինը:

Գոտեպնդված մե՛ծ Պարթևի
Սահակի հետ միասին,
Աշխա՛րհ ծնան, լո՛ւյս աշխարհի .
Մա՛հ, մի՛ մոտեցիր սուրբին:

Հուր լուսաճեմ նշանը վառ,
Էջմիածնից Օշական
Դագաղին վրա բռնած պար՝
Չէ՞ր բուն լույսը Մեսրոպյան:

Նա Մեսրովբին աստղերից վեր
Գրեց անուն բոցավառ,
Թող գան, երթան բյուր բյուր դարեր .

Նորան չի տիրիլ խավար:

Յո՛ւհա՛, ծթռած իմաստակներ,
Վասակի զարմ ուրացող,
Ո՞ւր եք նամաղուլ բեհսաբներ
Անում, որպես հերձվածող:

Իբր . «Մեսրովբ պարտական է
Սըվազցի Մխիթարին .
Հացեկացին սկսել է,
Բայց կատարել Սըվազցին»:

Ըռխի՛ն յաշիր, դու, այդ չքի,
Տե՛ս, ինչ մեծ մեծ է բրդում,
Հողս գլխիդ, ձեր ո՞ր գործի
Համար այդպես եք խոսում:

Թե՞ կարծում եք, որ աշխարհում
Վիեննացուց զատ մարդ չկա .
Ը՛հ, Մեսրովբի սատկա՛ծ կատուն
Ձեզ մի այնպիսի զարբ տա,

Որ մուկի պես Վատիկանի
Մտնեք ծակերն ահաբեկ .
Այսօր տոնն է մեր Մեսրովբի,
Ուրացողք, ծո՛ւնկ չոքեցեք: